




**ԱՄԵՆԱՅՆ ՀՈՅՈՑ ԵՄՅԲԱԴՈՒՅՆ ՊԱՏԻՄԱՐԻ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՆՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆՆԻ
ԵՄՅԲ ՏԱՃԱՐՈՒՄ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԵՐԵԿՈՅԱՆ, ՄԵՆ
ՊԱՀՈՑ ԱՌԱՋԻՆ ՀՍԿՄԱՆ ԽՈՍԱՆ ՔԱՐՈՋԸ**

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Ուրիշ եղիցին աղօթք մեր,
Որպէս խունկ առաջի Քո, Տէ՛ր»:

Սիրելի՛ հավատացյալներ և զավակներ Մեր.

Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցիին համար Մեծ պահոց շրջանով
կսկսին աղօթքի, զոչումի և ապաշխարության օրեր, այն հավատով, թե այս-
պիսով մեր հոգիները կմաքվին, մեր սրտերը աստվածային սիրով կնմվին,
մեր խիղճը կրեքենա, և մենք, մեր հավատով, մեր բարի և առաքինի գործե-
րով արդարացած, կկարողանանք արժանի դառնալ Փրկչի Ս. Հարության մեծ
ավետիսին, այնպես, ինչպես մեր մարմնական վերքերը, հարտար բժշկի մը
խնամքին տակ բուժելով, պիտի կարողանայինք հօր և առողջ կյանքի մը առա-
վոտը ողջունել:

Աղօթքը հոգիներու դեղ ու դարման է, քաղցր բալասան: Աղօթքը հուսո
կանքեղ է: Աղօթքը հգորիչ է և կենարար:

Հայ ժողովուրդը աղօթել գիտցող ժողովուրդ եղած է:

Ս. Գրիգոր Լուսավորիչ աղօթքով բացավ երկնքի դռները, ու Միածինը
իջավ Հայաստան աշխարհ:

Ս. Մեսրոպ աղօթքով հօրինեց հայոց լեզվի նշանագրերը:

Աղօթքով սկսավ Ավարայրի հակառակառուր:

Աղօթքով են հյուսված մեր լեզուն, մեր գրականությունն ու երգը:

Աղօթքով են շարված քարերը մեր սուրբ տաճարներուն:

Աղօթքով են գրչագրված ու վրձինված մեր հազարամյա մագաղաթները:

Աղօթքով է մխիթարված ու փրկության հույսը պահած հայ ժողովուրդը
իր դժբախտությանց սև օրերուն:

Եվ այսօր ալ Հայ ազգը եույն աղօթող ժողովուրդն է ամեն տեղ: Աղօթքով
է, որ այսօր համբա ենք ելած՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը շենցենելու և մեր Ս.
Եկեղեցին ուրախացնելու: Այսօր ալ հազար-հազար հայ հավատացյալ սրտեր

շերմագին աղոթքներ կկարդան մեր սուրբ սեղաններուն առաջ: Այդ աղոթքները բոլոր՝ այստեղ է որ կհավաքվին, այստեղ է որ կմիանան, և որպես լույս ու խունկ, ուղիղ դեպի երկինք կբարձրանան այս աստվածակառույց Մայր Սեղանեն, Միածնի իջման լուսեղեն համբեն:

Տե՛ր Աստված, «Քու աշխերդ գիշեր ցերեկ բոլ բաց ըլլան այս Տաճարին վրա, որուն համար ըսիր, քե «Այստեղ բոլ ըլլա իմ անունը», որպեսզի այստեղեն լսես Քու ծառաներուն աղոթքները տիվ ու գիշեր» (Գ Քազ., Ը 29):

Արքեցի՛ր, հայ ժողովուրդ, և աղոթե՛: Աղոթե՛ և գտի՛ր Բու իսկությունը: Աղոթե՛ և խաղաղե՛: Աղոթե՛ և միացի՛ր ու զորացի՛ր:

Արքեցի՛ր և հանչցի՛ր զհեզ Բու հայսնյաց հավատքի լույսով, Բու անցյալ կյանքի պատմությամբ, Բու փառավոր ստեղծագործություններով և Բու մշտանորոգ ուժերով:

Արքեցի՛ր և խաղաղե՛: Տե՛ս, դուրսը փոքորիկ է, գոնե Աղոթքի Տանդ մեջ խաղաղություն բոլ ըլլա: Եվ ի՛նչ հրաշալի պիտի ըլլար, եթե դրսի փոքորիկները հաղթահարել գիտնայիր ներքին խաղաղությամբ, ինչպես ըրավ մեր Տերը Հիսուս՝ փոքորկված ծովուն վրա, Իր տագնապյալ աշակերտներուն ծոցին մեջ: Ո՛ւր է սիրտդ, ժողովուրդ հայոց: «Միքէ չկ՝ ևս ունիս հաւատս»:

Բայց մանավանդ, ո՞վ հայ ժողովուրդ, Հայրենիքեն ներս քե ի սիյուսս աշխարհի, արքեցի՛ր և միացի՛ր ու իմաստությամբ վարե կյանքդ, իմաստությամբ գործե: Մի՛ մոռնար, որ Օշականեն հսկող Մեծ վարդապետը քեզի համար բարգմանեց «Ճանաչել զիմաստութիւն և զիւրաւ, իմանալ զբանս հանճարդ»:

Ատելություն, քե ն ու ռիս բոլ հեռանան մեր կյանքի սահմաններէն:

Արդ, «Մի՛ տրամեցնեք զիւրաւ, եղբայրեն՛ր» (Յակ., Ե 9), այլ «Ուրախությամբ ջուր առեք փրկության աղբյուրներէն» (Եսայի, ԺԲ 3): Մեր փրկության աղբյուրներն են՝ մեր հայսնյաց սուրբ հավատքը, Փրկչի իջման Սեղանեն նառագայթող լույսը, մեր նահատակ Ազգի պատմության ոգին և մեր ժողովրդի ու Հայրենիքի մեր օրերու վերածնունդը:

Մենք կհավատանք մեր վերածննդին, մենք կհավատանք մեր կյանքի ուժերուն, մենք կհավատանք մեր ապագային:

Այս հույզերով գեղուն հոգիով, և միշտ հուսալի սրտով, առաջիկա պահոց Բառասուն օրերը Մենք կհռչակենք հսկումի և աղոթքի շրջան «վասն խաղաղութան ամենայն աշխարհի» և մանավանդ վասն խաղաղության, վասն հաստատության Ս. Եկեղեցվոյս և Ազգիս Հայոց:

Եվ որպես առաջին աղոթող, Միածնի Ս. Սեղանի առաջ Մենք ծունկի կուգանք մեր ժողովրդի անխտիր բոլոր զավակներուն՝ հաշտության և սիրով միաբանության համար:

«Եկեցե՛ք ի վերայ մեր ողորմութիւն Քո, Տե՛ր, և փրկութիւն Քո ըստ բանի Բուն», այժմ և միշտ և հավիտյանս, ամեն:

